ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՍԱՐՅԱՆ 22, ՀԵՌ.(374-10) 52-85-11 (406), ՖԱՔՍ (374-10) 525563

« 14 » հուլիսի 2022 թ.

№ ԱՍ/34.2-Մ2-9/2322-2022

«ԳՈՌՍՈՒ» ՍՊԸ-ի տնօրեն
Ս. Մկրտչյանին

«ԳՈՌՍՈՒ» ՍՊԸ-ի սնանկության գործով
կառավարիչ Ա. Ադամյանին

Հարգելի պարոնայք,

Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի հուլիսի 13-ի «ԳՈՌՍՈՒ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը կարճելու մասին» №304-Ա որոշման պատճենը:

7/14/2022

X

ԱՐԹՈՒՐ ՍԱՖԱՐՅԱՆ

Ա. Սաֆարյան

Կատարող՝ Ս. Ղարախանյան ☎ 52-85-61 (124)

600.0304.13.07.22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հուլիսի 2022 թվականի №304-Ա
քաղ. Երևան

«ԳՈՌՍՈՒ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) 2022 թվականի մայիսի 11-ի №07/11.1/3504-2022 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով) տեղեկացրել է, որ իրականացված ռադիոհսկման աշխատանքների արդյունքում Հանձնաժողովի կողմից «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված 164,175ՄՀց ռադիոհաճախականությամբ շահագործվող բազային կայանի վրա արձանագրվել են արտաշերտային ճառագայթումներ՝ «ԳՈՌՍՈՒ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) պատկանող «ԱՅԳԵՁՈՐ» տաքսի ծառայության ռադիոցանցի 158,025ՄՀց ռադիոհաճախականությամբ շահագործվող բազային կայանից,

բ) Հանձնաժողովը «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 20-րդ հոդվածի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով Ընկերության նկատմամբ 2022 թվականի մայիսի 19-ից հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2022 թվականի մայիսի 19-ի №ԳԲ/34.2-Մ2-9/1592-2022 գրությամբ,

գ) Ընկերությունը, հարուցված վարչական վարույթի շրջանակում, 2022 թվականի մայիսի 27-ի գրությամբ Հանձնաժողովին տեղեկացրել է, որ իրեն պատկանող տաքսի ծառայության ալեհավաքի անսարքության հետ կապված խնդիրը վերացվել է,

դ) Հանձնաժողովը 2022 թվականի հունիսի 10-ի №ՍՇ/34.2-Մ2-9/1842-2022 գրությամբ վարչական վարույթի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր, նյութեր կամ այլ տեղեկություններ ձեռք բերելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ փոխօգնության կարգով դիմել է Նախարարություն՝ ստանալու Ընկերության կողմից 158,025ՄՀց ռադիոհաճախականությամբ շահագործվող բազային ռադիոկայանի աշխատանքի վերաբերյալ տեղեկատվություն,

ե) Հանձնաժողովը 2022 թվականի հունիսի 13-ի «ԳՈՌՍՈՒ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը կասեցնելու մասին» №252-Ա որոշմամբ կասեցրել է Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը՝ մինչև Հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 10-ի №ՍՇ/34.2-Մ2-9/1842-2022 գրությամբ հայցվող տեղեկատվությունը Նախարարությունից ստանալը,

զ) Նախարարությունը 2022 թվականի հունիսի 17-ի №07/11.1/3504-2022 գրությամբ հայտնել է, որ Երևան քաղաքի Այգեձորի փողոցի №70 հասցեում իրականացված հետազոտումների արդյունքում Ընկերության բազային ռադիոկայանի մոտ խանգարումներ առաջացնող կողմնակի ճառագայթումներ չեն արձանագրվել, և ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Ընկերության բազային ռադիոկայանը փոխարինվել է, ինչը հաշվի առնելով Հանձնաժողովը վերսկսել է 2022 թվականի մայիսի 19-ից Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը, որի մասին վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 22-ի №ԳԲ/34.2-Մ2-9/2029-2022 գրությամբ,

է) Հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ մինչև պատասխանատվության միջոց կիրառելու մասին Հանձնաժողովի որոշման ընդունումը Ընկերությունը վերացրել է թույլ տված խախտումը, և եթե դրա հետևանքով չի վտանգվել և չէր կարող վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, այն ուղղակիորեն չի հանգեցրել մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման, թույլտվության պայմանների կոպիտ խախտման, այլ կարգավորվող անձի օրինական շահերի խախտման, կարգավորվող գործունեության խոչընդոտման կամ թույլտվության պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, և առկա չէ խախտման կատարման կրկնակիություն, տվյալ դեպքում, Հանձնաժողովը գտնում է, որ հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման, և

հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարճել Ընկերության նկատմամբ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 20-րդ հոդվածի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով 2022 թվականի մայիսի 19-ին հարուցված վարչական վարույթը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱԴՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
13 հուլիսի 2022 թ.